ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 234 - Ա

«ՇԱՔԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՂԻՆԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՌԻՄԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ ՊՆ ՀԶԿ Սյունիքի մարզի զինվորական կոմիսարի ծանուցագիրը ու «Շաքիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վ. Հարությունյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Շաքիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վաղինակ Հարությունյանին 2026 թվականի մայիսի 12-ից հունիսի 5-ը ներառյալ ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ վարժական հավաքին մասնակցելու նպատակով:

2. «Շաքիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ընթացքում նրա պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Ռիմա Սարգսյանին:

13.05.2026

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀՀ Սյունիքի մարզպետին փոխարինող Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2026թ. մայիսի 13
Ք. Կապան